

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 159.922.7

ԾՆՈՂԱԿԱՆ ՆԵՐՇՆՉԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՍ-ԿՈՆԵԿՏԻԱՅԻ ՀԵՏ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐԻՉ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՐ ՓՈՐՁԸ

Ս. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
0010, Երևան, Տիգրան մեծի 17
e-mail: sirinaarakelyan@yahoo.fr

Հոդվածում վերլուծվել և հստակեցվել են Ես-կոնցեպցիայի կառուցվածքային այն բաղադրիչները, որոնք ուղղակիորեն կապված են արտաքին միջավայրի հետ, վերջինիս ներշնչող ազդեցությամբ փոփոխություններ են կրում, ինչպես նաև «կեղծ ներշնչանք», «Ներկա Ես», «Անցյալ Ես», «Ապագա Ես», «հոգեբանական բարիքեր /արգելապատնեշ/» հասկացությունները: Հոգեկարգավորիչ աշխատանքների ընդհանուր նկարագրություններով հոդվածում ընդգծվում է Ես-կոնցեպցիայի Անցյալ Ես-ի հատվածում փոփոխությունների դերը հոգեբանական արգելապատնեշի և հոգեբանական տարբեր այլ խնդիրների հաղթահարման գործում:

Բանալի բառեր. *Ես-կոնցեպցիա, հայելային Ես, ներշնչանք, կեղծ ներշնչանք, «Ներկա Ես», «Անցյալ Ես», «Ապագա Ես», կեղծ Ես, երևակայվող փորձ, հոգեբանական բարիքեր /արգելապատնեշ/, մանկական ամենգիա:*

Ներկայացված է խմբագրություն 12.12.2015 թ.

Երեխայի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունների հիմքերը դրվում են ամենավաղ մանկական տարիքից, նույնիսկ նախածննդյան շրջանից: Իսկ ծնվելուց հետո, ըստ Մ. Մալերի, հատկապես հուզական սիմբիոզի շրջանում մոր հույզերն ու ապրումները դիֆուզ ձևով փոխանցվում են երեխային [1], որոնք հետո բյուրեղանում են՝ դրսևորվելով որպես սեփական Ես-ի հանդեպ հուզագնահատողական վերաբերմունք: Այս գործընթացում հզոր դեր է կատարում այն միջավայրը, որտեղ ձևավորվում է երեխան: Ես-կոնցեպցիայի, երեխայի վարքի ու շրջապատող միջավայրի փոխադրման ավորվածությունը կարևորվել են բազմաթիվ հեղինակների կողմից: Դ. Բ. Էլկոնինը ինքնաճանաչման, ինքնագիտակցման ճանապարհի սկզբը ուրիշներից սեփական անձի անջատումն է համարում [2]: Ըստ այլ հեղինակների, Ես-ի ձևավորման այս նախապայմանը բնորոշ է միայն հուղաքրիստոնեական մշակույթին [3]: Նույնիսկ առանձնացումից հետո Ես-կոնցեպցիայի և դրա առանձնահատկությունների վրա միջավայրի ազդեցությունը չի դադարում, ինչի հիման վրա առանձնացվում է Ես-կոնցեպցիայի՝ շրջապատի հետ կապված բաղադրիչը, որը տարբեր աղբյուրներում

տարբեր անուններով է հանդես գալիս՝ «վերագրվող Ես», «Ես-միջավայր», «Ես-սոցիալական», «հայելային Ես» և այլն [4]: Սա այն շատ կարևոր բաղադրիչն է, որ ցույց է տալիս, թե ինչպես են մարդու կարծիքով ուրիշներն իրեն ընկալում: Ս. Լ. Ռուբինշտեյնը նշում է. «Այլ մարդկանց հետ հարաբերություններով միջնորդավորված՝ մարդու մոտ ձևավորվում է նաև իր հանդեպ վերաբերմունքը... ուռճացված կամ նվազեցված ինքնագնահատականը, ... ինքնագոհությունը, հպարտությունը ... և այլն» [5]: Ի. Ս. Կոնի կարծիքով դեռևս վաղ մանկական տարիքից երեխան սովորում է այլ մարդկանց դերի մեջ մտնել և նաև իրեն ընկալել որպես ուրիշների ակնկալիքների օբյեկտ [6]: Դեռևս Ու. Ջեյմսը, Ես-կոնցեպցիայի կառուցվածքում առանձնացնելով «սոցիալական Ես-ը», նշում է. «Անձն ունի նույնքան սոցիալական Ես-եր, որքան նրան ճանաչող մարդիկ կան, ովքեր նրա պատկերն ունեն իրենց մտքում... որքան հստակ տարանջատված մարդկանց խմբեր կան, որոնց կարծիքը նա կարևորում է... » [7]:

Հ. Ս. Մալիվանը ևս Ես-համակարգի բոլոր բաղադրիչներն է պայմանավորում այլ մարդկանց հետ փոխհարաբերություններով. «Ես-համակարգը կառուցված է այլ մարդկանց կողմից մեզ տրված արձագանքներից, ... արտացոլված գնահատականներից: Այլ մարդիկ գործում են հայելու էֆեկտով՝ իրենց հակազդեցություններով մեզ տեղյակ պահելով մեր Ես-ի պատկերների մասին» [8], այսինքն, մեր մասին պատկերացում կազմում ենք միայն ուրիշների՝ մեզ տրված հակազդեցությունների հիման վրա:

Կ. Ռոջերսը և Դ. Վ. Վիննիկոտը նաև Ես-ի պրոբլեմներն են շրջապատի ազդեցությամբ բացատրում՝ համարելով, որ դրանց պատճառը ուրիշների ակնկալիքներն արդարացնելու մարդու ձգտումն է. «մարդն հաճախ բացահայտում է, որ գոյություն ունի միայն որպես ուրիշների պահանջների արձագանք, նրան թվում է, որ չունի սեփական Ես, նա ընդամենը փորձում է մտածել, զգալ ու վարվել այնպես, ինչպես պետք է մտածեր, զգար ու վարվեր ուրիշների կարծիքով» [9]: Դ. Վ. Վիննիկոտը նույնիսկ առաջ է քաշում «կեղծ Ես-ի» հայեցակարգը՝ համարելով, որ մոր հետ արտահայտված սիմբիոզի պատճառով «Գոյություն չունի «նորածին» երևույթը» [10], և նորածնության շրջանում են դրվում կեղծ Ես-ի հիմքերը, քանի որ ծննդյան պահից ի վեր երեխան սկսում է ենթարկվել մոր ցանկություններին՝ զոհաբերելով իր իրական Ես-ի գոյության հնարավորությունն անգամ [11]:

Վերոհիշյալ տվյալները վկայում են այն մասին, որ չնայած իր կայուն համակարգ լինելուն՝ Ես-կոնցեպցիան շատ մեծ փոփոխություններ կարող է կրել հատկապես կարևոր, նշանակալի անձանց ազդեցության տակ, ինչպիսիք են ծնողները հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար: Ծնողների խոսքերը, զգուշացումները, երեխային դիմելու ձևը, հոգեկանի ոչ խոսքային դրսևորումները Ես-ը ձևավորող և նույնիսկ ծրագրավորող ազդեցություն են թողնում: Այսպես, մեր կատարած հարցումներն և դիտումները ցույց են տվել, որ շատերը սկսում են իրենց անձնային այս կամ այն առանձնահատկությունը նկատել և դրան ուշադրություն դարձնել միայն այն բանից հետո, երբ ծնողներից մեկն այդ մասին ասում է, երբ երեխային համեմատում են այս կամ այն մարդու, հատկապես հարազատներից մեկի հետ, երբ սեռի, տարիքի, անունների համընկնում է լինում (անունը Ես-կոնցեպցիայի խորհրդանիշներից մեկը կարելի է համարել), իսկ այս ամենը անձի՝ այլ մարդու հետ նույնացման և ներշնչանքի հիմք կարող է դառնալ [12]:

Դեռևս 19-րդ դարում Բ. Միդիսը ներշնչանքը բնորոշում է որպես իր հետևից այլ միտք բերող, այլ գաղափարի հանգեցնող մտքի ներմուծում՝ նշելով, որ ներշնչվող միտքը կարող է շատ կամ քիչ դիմադրության հանդիպել, կարող է անքննադատ ընդունելության արժանանալ, բայց «իրականացվում է չգիտակցված, նույնիսկ ավտոմատ կերպով» [13]: Այսօր սակայն մի շարք հեղինակներ պնդում են, որ ինֆորմացիայի գիտակցված կամ չգիտակցված լինելը որևէ նշանակություն չունի ներշնչանքի արդյունավետության հարցում [14]:

Կարևոր է, թե ինչն ենք մենք անվանում «կեղծ ներշնչանք». չէ՞ որ ցանկացած ներշնչվող միտք ենթադրում է առկա իրականության, դրա օբյեկտիվ կողմի հետ կապի բացակայություն կամ դրա քիչ կամ շատ աղճատվածություն, այլապես կհամարվեր «փաստի, ինֆորմացիայի հաղորդում»: Մեզ համար մեկնակետ է հանդիսացել նախ ներշնչվող ինֆորմացիայի բովանդակության ժամանակագրությունը: Կեղծ կարելի է համարել անցյալի իրադարձությունների փոփոխված կամ աղճատված տարբերակները, նաև ներկայի ու ապագայի հետ առնչվող այն ներշնչանքները, որոնց բովանդակությունը ոչ մի պարագայում չի կարող իրականություն դառնալ:

Այս մեթոդով աշխատելու միտքը ծագեց «կեղծ հիշողությունների սինդրոմի» [15] երևույթի հիման վրա. եթե տեղի չունեցած իրադարձությունների մասին կեղծ հիշողությունները կարող են հոգեկանը խաթարող ու դեստրուկտիվ ազդեցություն ունենալ, ապա ինչու՞ հնարավոր չէ անձի վրա դրանց բևեռայնորեն հակառակ՝ թերապևտիկ ազդեցությունը: Իսկ ի տարբերություն Մ. Էրիկսոնի «երևակայվող փորձի» [16] (այցելուին տարբեր սյուժեներով պատմություններ էին առաջարկվում և այցելուն այս պատրաստի սյուժեների շարքից ինքն էր ընտրում ապագայի վերաբերյալ իր համար նախընտրելի սյուժեն), մեր կողմից առաջարկվող «կեղծ ներշնչանքները» ուղղված են դեպի անցյալն ու անցյալում տեղի ունեցած երևակայական իրադարձություններ են ստեղծում՝ փոփոխելով Ես-կոնցեպցիայի զարգացման պատմությունը, որն իր հերթին փոփոխություն հիմք է դառնում ապագա իրադարձությունների համար:

Չարկ ենք համարում ներկայացնել նաև Ես-կոնցեպցիայի կառուցվածքի հստակեցման մեր փորձից կոնկրետ այս նյութին առնչվող մեր տեսակետը: Ես-կոնցեպցիայի կառուցվածքի հստակեցման նպատակով մենք առաջարկում ենք դրա կազմում առկա բաղադրիչների համակարգում, որի արդյունքում մարդու՝ սեփական Ես-ի մասին պատկերացումները կարող ենք դասակարգել՝ նաև ըստ իրենց ժամանակային հարաբերության: Ըստ այդմ, Ես-կոնցեպցիայի կազմում պիտի առանձնացվեն «Ներկա Ես», «Անցյալ Ես» և «Ապագա Ես» բաղադրիչները: Սեփական Ես-ի վերաբերյալ ներշնչանքների առկայության վերլուծության համար առավել մեծ կարևորություն ունի հատկապես «Անցյալ Ես-ը»:

Նշենք, որ աշխատանքները տարել ենք հիմնականում նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների հետ, ովքեր ունեին տարբեր ակտիվություններ դրսևորելու հոգեբանական բարիքներ՝ արգելապատնեշ, որ ենթադրում է անձի կողմից փոխհարաբերությունների հաստատման կամ որևէ այլ գործունեության իրականացման ընթացքում ծանր, բացասական ապրումների առկայություն [17]:

Մենք ընտրել ենք հատկապես այս տարիքային շրջանն այն պատճառով, որ հենց այս տարիքում արդեն ակնհայտ դրսևորվում է մանկական ամենզիայի երևույթը: Վերջինս

բնորոշվում է որպես «վաղ մանկության շրջանի իրադարձությունները հիշելու անկարողություն», քանի որ հիմնականում ձևավորման համար հիմք ծառայող հիշողությունն ավելի վաղ է ձևավորվում, քան փաստերը հիշելուն ծառայող հիշողության տեսակը, որը սովորաբար 3 տարեկանից հետո է ձևավորվում [18]: Ի հայտ է գալիս մոտ 4-7 տարեկանում, երբ «հիշողությունների մեծ մասը ոչ թե իրականում անձի կողմից հիշվող իրողություններն են դառնում, այլ հավաքագրված, իմացված տեղեկություններ» իր մասին [18, 19]: Զարգացման հենց այս փուլում են երեխաներն սկսում իրենց վաղ մանկության մասին հարցեր տալ ծնողներին: Ասենք, բավական տարածված երևույթ է, երբ 5-8 տարեկան երեխաների խոսքը սկսվում են «իսկ երբ ես փոքր էի...» արտահայտությամբ: Ստորև կներկայացնենք նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի տարբեր հոգեբանական բարիքներ ունեցող երեխաների դեպքերի վերլուծության օրինակներ:

Արամ Վ., 5 տարեկան է, նորածնության շրջանում ունեցել է մարսողության և նյութափոխանակության հետ կապված խնդիրներ, արդյունքում՝ դեմքի մաշկի երկարատև ու տանջալի բորբոքումներ: Թե՛ ինքը, թե՛ մայրը բժշկի ցուցմամբ հետևել են խիստ սննդակարգի: Մայրը շատ հաճախ թույլ չի տվել երեխային ինչ-որ բան փորձել՝ վախենալով, թե «նույն վերքերը կարող են հայտնվել»: Միմիկոզը բավական արտահայտված է, ինչի հետևանքով էլ երեխայի մոտ ձևավորվել է հոգեբանական բարիք՝ որևէ նոր ուտելիք փորձելու հարցում, չնայած մարսողական պրոբլեմն այլևս չկա: Խնդիրը սրվում է սնվելու ոլորտում մոր դրսևորած գերուշադրության պատճառով:

Այս դեպքում երեխաների հետ մեր աշխատանքի համար հիմք և մեկնակետ ենք համարում երկու կարևոր հանգամանք 1. Ես-ի զարգացման պատմության տարիքային առանձնահատկությունները՝ նորմատիվ ամենեզիայի առկայությունը 2. Բարիքը երեխայի համար բարդություն է ներկայացնում որևէ գործողություն անելու կամ չանելու նորության տեսանկյունից, քանի որ նորն է երեխայի համար դիտարկվում որպես վտանգավոր՝ տագնապահարույց, քանի որ հետևանքներն իր համար պարզ չեն, բայց մոր անհանգստությունները անորոշ վտանգի սպառնալիք են ներշնչում: Նախնական ենթադրությունը հետևյալն էր. եթե երեխան իմանա, որ ինքը ինչ-որ գործողություն արել է նախկինում, ապա սա կարող է հիմք դառնալ նաև ապագայում նման գործողություն կատարելու համար: Նախնական պայմանավորվածության համաձայն երեխայի ներկայությամբ մայրը նրա մասին կեղծ հիշողություն է պատմում, թե նախկինում ինչքան է սիրել այդ ուտելիքը, «ուղղակի հիմա մոռացել է»: Տանը ներշնչանքները մոր կողմից շարունակվում են նույն պլուստիկ զարգացմամբ: Կեղծ ներշնչանքի ազդեցության տակ իր համար անձանոթ ուտելիքը փորձելիս երեխայի մոտ կեղծ հիշողությունների ազդեցության տակ նույնիսկ անցյալում փորձած լինելու մասին համային և պատկերային գուգորություններ են առաջանում. «Հիշեցի էս համը, կերել եմ, առաջ սիրում էի: Հիմա քիչ եմ սիրում»: Իրողության հավաստիության համար մենք այս փորձը կրկնել ենք նաև 4-8 տարեկան 10 այլ երեխաների հետ և արձանագրել նման արդյունքներ: Երեխաներից 9-ի մոտ արթնացան կեղծ հիշողություններ չփորձած ուտելիքների համի հետ կապված: Մենք հոտի հետ կապված կեղծ հիշողությունները հաշվի չենք առնում (չնայած բոլորի մոտ առկա էին նաև հոտի կեղծ հիշողություններ), քանի որ հոտը կարող էին զգացած լինել նախկինում առանց սնունդը փորձելու:

Միքայել Գ., 7 տարեկան է, թե՛ իր տարեկիցների, թե՛ հասուն տարիքի մարդկանց հետ շփման խնդիրներ ունի, որ դրսևորվել են թե՛ մինչ դպրոցը՝ քոլեջ-նախակրթարանում, թե՛ դպրոցում: Մոր պնդմամբ՝ «Ամեն ինչ գիտի, սակայն ամաչում է պատասխանել, ուսուցիչները մտածում են, թե չի սովորել»: Երեխան մտավոր խնդիրներ չունի, տանը և դպրոցում անսխալ կատարում է գրավոր առաջադրանքները: Այս դեպքում ևս երեխան հետաքրքրվում էր ավելի վաղ տարիքում իր արարքներով, զարգացման իր պատմությամբ, հատկապես, որ նրան համեմատում էին կրտսեր եղբոր հետ. մայրն անընդհատ շեշտում էր նրանց հակապատկեր լինելը՝ «Միքայելը նման չէ եղբորը, որ ամաչկոտ է, չի կարողանում այս կամ այն գործողությունը կատարել և այլն»:

Այս դեպքում երեխայի մորը ցուցումներ ենք տվել, որ նախ և առաջ դադարեն երեխաներին համեմատել՝ շեշտելով տարբերությունները: Ապա նաև կեղծ ներշնչանքներ տանել այն ուղղությամբ, որ փոքր տարիքում ինքն էլ էր սիրում արտասանել, շփվել ոչ միայն ծնողների, այլ նաև այլ մարդկանց հետ: Ծնողները պետք է երեխայի մասին նույնիսկ դրվագներ հնարեին, թե ինչպես էր նա սիրում ուրիշ երեխաների հետ խաղալ, մոտենում և ինքն էր ծանոթանում: Երեխայի ուսուցչուհին ևս նախազգուշացվել էր, որպեսզի երեխայի համար ոչ բարենպաստ, չշփվող լինելու Ես-ի առանձնահատկությունը չշեշտի, այլ ընդհակառակը, շփման, հաղորդակցության մեջ մտնելու նվազագույն փորձն անգամ խրախուսվի: Երեխայի մեջ փոփոխություններ սկսեցին գրանցվել մոտ երկու ամսից, երբ նա սկսեց պատասխանել դասերը, ակտիվացավ շփումը նաև համադասարանցիների հետ:

Իհարկե, ինչպես այլ դեպքերում, ներշնչանքների իրականացման կարևորագույն նախապայման մենք համարում ենք երեխայի համար ներշնչողի անձի կարևորությունը, իսկ կեղծ ներշնչանքների դեպքում՝ նաև ներշնչողի կողմից կեղծ ներշնչանքի բովանդակությանն անկեղծորեն ու անվերապահորեն հավատալը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Pine F., Mahler's Concepts of «Symbiosis» and Separation-Individuation: Revised, Reevaluated, Refined. New York, Japa, pp. 511-533.
2. Эльконин Д. Б. К проблеме периодизации психологического развития в детском возрасте // Вопросы психологии. №4, 1971.
3. Налчаджян А. А. Этническая характерология. Ереван, «Огебан», 2001, с.23
4. Я-социальное, Я-зеркальное. <http://www.slovochel.ru>
5. Рубинштейн С.Л. Проблемы общей психологии. М., 1973., с67.
6. Кон И. С. Открытие «Я». М., Политиздат, 1978. с 365.
7. James W., The Principles of Psychology, Harvard University Press, Henry Holt and Co., NewYork, 1890.
8. Steven N. Gold, Bacigalupe G., Interpersonal and Sistemic Theories of Personality. Advanced Personality, Chapter 3, New-York: Plenum, pp. 57-79.
9. Роджерс К. Становление личностью. М., «Прогресс», 1994.
10. Тайсон Р., Тайсон Ф. Психоаналитические теории развития. Екатеринбург, «Деловая книга», 1998. с. 39.
11. True self and false self. http://en.wikipedia.org/wiki/True_self_and_false_self

12. Դոլաթխահ Ա., Անձի նույնացումների դերը սրտանոթային հիվանդությունների առաջացման գործում, հ. գ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012:
13. Sidis B., The Psychology of Suggestion. A Research into the Subconscious Nature of Man and Society. Harvard University. N.Y. D Appelton and Co., 1899, 386p.
14. Խուդոյան Ս.Ս., Զգիտակցվող ենթաշեմային ներշնչանքների հոգեթերապևտիկ արդյունավետությունը, <https://www.academia.edu/8737927/>
15. False Memory http://psychology.wikia.com/wiki/False_Memory
16. Эриксон М., Мой голос останется с вами XXI век, 1995, 135 с.
17. Барьер психологический <http://wiki.myword.ru/index.php>
18. Mosby's Medical Dictionary, 9th edition, Elsevier Health Sciences, 2013. <http://medical-dictionary.thefreedictionary.com/infantile+amnesia>
19. Childhood amnesia. http://en.wikipedia.org/wiki/Childhood_amnesia,

РЕЗЮМЕ

ИЗ ОПЫТА ПСИХОКОРРЕКЦИОННЫХ РАБОТ С РОДИТЕЛЬСКИМИ ВНУШЕНИЯМИ И Я-КОНЦЕПЦИЕЙ ЛИЧНОСТИ

С. О. АРАКЕЛЯН

В статье анализируется влияние родительских внушений на развитие Я-концепции, также анализом случаев, представляется метод ложных внушений, как эффективный метод работы с психологическим барьером с детьми дошкольного и младшего школьного возраста.

SUMMARY

OUR EXPERIENCE OF PSYCHO CORRECTIONAL WORK WITH THE PARENTAL SUGGESTION AND THE SELF-CONCEPT

S. H. ARAKELYAN

The article analyses the role of parental suggestion in Self-concept formation. The author presents her experience of psycho correctional work with the Past-self as a part of Self-concept with the method of false suggestions.